Հովհաննես Շիրազ

Սփյուռքի հայությունը

Ես, որպես ծաղիկն Արազի ափին,
Նայում ջրերին, կարոտում եմ դեռ,
Դուք, որ հեռացաք այն սև օրերին, -
Դուք չե՞ք կարոտում, իմ հեռավորներ,
Իմ պանդուխտ հայեր:

Նայում Սևանա երազ ծովակին,
Նայում կարոտով, կարոտում եմ դեռ,
Կարծես նայում եմ մորս աչքերին, -
Դուք չե՞ք կարոտում, իմ հեռավորներ,
Իմ պանդուխտ հայեր:

Նայում Մասիսին մեր նվիրական,
Հալվել եմ ուզում կրծքին ալեհեր,
Ինչքան նայում եմ՝ կարոտում այնքան, -
Դուք չե՞ք կարոտում, իմ հեռավորներ,
Իմ պանդուխտ հայեր:

ՈՒ երբ մի գիշեր չեմ տեսնում նրանց,
Թվում է, ձեզ հետ որբ եմ կարևեր,
Դուք ինչպե՞ս օտար աշխարհներ ընկած՝
Չեք մեռնում վշտից, իմ հեռավորներ,
Իմ պանդուխտ հայեր: